

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԿԵՆԴԱՆԻՆ կապույտ կետն է: Նրա երկարությունը 33 մետր է, քաշը՝ 150 տոննա: Կետի սիրտը կշռում է 600—700 կգ, երկամները մեկ, իսկ լեզուն՝ 2 տոննա: Ստամոսի երկարությունը 3 մետր է, աղիքներինը՝ 250 մետր:

Կետը շնչում է դրսի օդով, որի համար 10—15 բուլբուլներ մեկ դուրս է գալիս ջրի երեսը: Արտաշնչելիս նրա քրտնաթմբից, որոնք գտնվում են գլխի ամենավերին մասում, դուրս է ժայթքում խոնավ օդը, որը օվկիանոսի սառը տարածության մեջ վերածվում է ջրի գոլորշու և խփում շատրվանի պես երբեմն մինչև 7 մետր բարձրությամբ:

Հաստ ճարպաշերտը, որը երբեմն հասնում է մինչև կես մետրի, պահում է կետի մարմնի տաքությունը, և նա կարողանում է ապրել օվկիանոսի սառը ջրերում:

Կետի կոկորդի անցքը նեղ է. այդ պատճառով էլ նա սնվում է ծովային մանր-մուր կենդանիներով:

Նորածին կետի երկարությունը 7 մետր է, քաշը՝ 5—6 տոննա:



ԱՄԵՆԱՄԵԾ ՍՄԲԱԿԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆ աֆրիկյան փիղն է, որի քաշը 5 տոննա է, բարձրությունը՝ 3,5, իսկ իրանի երկարությունը 4,5 մետր: Ապրում է 70—80 տարի: Օրական ուտում է մոտ 15 փուք սննդամթերք՝ բամբակ, շաքարեղեգ, ծառի տերևներ: Քնում է կողքի վրա պսակած: Չնայած իր հսկա քաշին նա կարող է վազել ժամում մոտ 20 կմ արագությամբ: Իսկ լեռնոտ վայրերում նույնիսկ՝ մագլցել:

Փղերը շատ են սիրում լողանալ և հաճախ փայտով ու քարով փակում են ջրի ճանապարհն ու իրենց համար արհեստական «վանաներ» պատրաստում: Փղի հղիությունը տևում է 22 ամիս: Նորածնի քաշը 90 կգ է, բարձրությունը՝ 1 մետր:





ԱՄԵՆԱՄԵՆ ԹՈՉՈՒՆԸ ափրիկյան ջալամն է. նրա բարձրությունը 2,75—3 մետր է, երկարությունը (կտուցի ծայրից մինչև պոչի վերջը)՝ 2—5 մետր, իսկ քաշը 90 կգ: Ջալամը չի բռնում: Բայց իր երկար, ուժեղ և մկանուտ ոտների շնորհիվ արագ վազում է և կարող է մրցել արշավածի ու հետ: Նրա ոտքի հարվածը կարող է մահացու լինել մարդու համար:

Ջալամի ձուն կշռում է 2,5 կգ, այսինքն մոտ 36 անգամ ավելի, քան հավի ձուն: Ջալամների մոտ բուխ է նստում սևափետուր արուն, որովհետև էգն իր մոխրավուն գույնով անմիջապես աչքի է ընկնում: Թուխը նստած ժամանակ հեռվից ջալամը նման է դուրս ցրցված մեծ փափ, կամ գորշ հողաքմբի: Ջալամի ստամոքսը շատ դիմացկուն է. նա կարող է կույ տալ երկարի կտորներ, պղնձյա դրամներ, մեխ, ապակի և այլն:

Արու ջալամներին որսում են սպիտակ փետուրների համար:

17-րդ դարում բարբարոսաբար ոչնչացվել են գիգանտ ջալամները, որոնք ժամանակակից ափրիկյան ջալամներից երկու անգամ ավելի մեծ են եղել:

ԱՄԵՆԱՅԱՐՉԻ ԿԵՆԴԱՆԻՆ ԸՆՃՈՒՊՈՒՆ է: Նրա բարձրությունը, գլուխը վեր բարձրացրած վիճակում 6 մետր է: Ընճուպի ոչ միայն վիզն է երկար, այլև՝ լեզուն, որը հասնում է 60 սմ-ի: Նրա քաշը մոտ կես տոննա է: Ընճուպներն ապրում են հոտերով և կարող են երկար ժամանակ դիմանալ առանց ջրի: Արածելիս ընճուպն իր առջևի երկար ոտները լայն տարածում է, որպեսզի կարողանա գլուխն իջեցնել ներքև:

Իր արագավազությամբ այս կենդանին կարող է մրցել արշավածի ու հետ:

ԱՄԵՆԱՄԵՆ ԶՈՒԿԸ կետանման շնանուկն է: Նրա երկարությունը 15 մետր է: Սնվում է մանր ջրային կենդանիներով և խեցգետիններով: Մեկ հսկա շնանուկը կարող է ուտել այնքան խեցգետին, որքան կուտեն մեկ միլիոն ծովատառեխներ: Իր բերանի և բեղիկների առանձնահատուկ կառուցվածքի պատճառով մեծ կենդանիներով սնվել չի կարող, ուստի մարդու համար անվտանգ է: Սակայն կետանման շնանուկը շատ վտանգավոր գիշատիչ կենդանի է փոկերի, դելֆինների համար:

ԱՄԵՆԱՄԵՆ ՍՈՂՈՒՆԸ վիշապ օձն է: Նրա երկարությունը 10 մետրից ավելի է: Ունի գորշ ձիթապտղի



գույն: Մյուս օձերի նման ականջ չունի և ձայնային տատանումներն ընկալում է լեզվով: Վիշապ օձը մաշկափոխության ժամանակ մյուս օձերի նման դեն է նետում իր շապիկն ու ակնոցները: Նրա շապիկը շատ մաքուր և դիմացկուն է, որի շնորհիվ օգտագործվում է կոշիկեղենի և գալանտերեայի արտադրության մեջ: Շապիկը երբեմն այնքան լայն է լինում (մինչև 60 սմ), որ հնարավոր է նրանից կանացի հագուստ կարել:



ՓԱՓԿԱՄՈՐԹՆԵՐԻ ՄԵՋ իր մեծությամբ հայտնի է ծովային խխունջը, որի մարմնի շառավիղը 1.5 մետր է, իսկ քաշը մոտ 300 կգ: Նրա մասին պատմվում է Ժյուլ Վեռնի «80 հազար կիլոմետր ջրի տակ» գրքում: Ապրում է Հնդկական օվկիանոսում և Կարմիր ծովում: Շատ վտանգավոր է և՛ կենդանիների, և՛ մարդկանց համար:




ԱՄԵՆԱՄԵՄ ԹԻԹԵՌՆ ապրում է Ամերիկայում: Իրանի երկարությունը 9 սմ է: Նրա իսկական անունը Տիտանալլիս կոլոսաուս է: Իր հզոր քեների միջոցով կարողանում է քոչել շատ արագ և բարձր: Գիտնականները նրան բռնելու համար խփում են հրացանով, օգտագործելով ավազ, իսկ տեղացիները սպանում են նետ աղեղով: Այդ քիթն իր գույնով ու արտաքին տեսքով շատ նման է բուին: Միսն ուտվում է:

ԱՄԵՆԱՄԵՄ ԲՉԵՉԸ հսկա փայտահատն է, որի երկարությունը 18 սմ է, նրան մի փոքր զիջում է հերկուլեսյան բզեզը՝ 15 սմ: Երկուսն էլ ապրում են Հարավային Ամերիկայում: Մեռ երկրում ամենամեծ բզեզը զառուսական հսկա փայտահատն է, որի երկարությունը 11 սմ է:



ԱՄԵՆԱՄԵՄ ՍԱՐԴԸ Թռչնակերն է: Ապրում է արեւմտադարձային երկրներում՝ նոր Գվինեայում, Մեծ Զոնդյան կղզիներում և Հարավային Ամերիկայում: Թռչնակերի երկարությունը 12 սմ է, ունի 6—8 աչք, որոնք դասավորված են խաչաձև: Որսի է դուրս գալիս գիշերը: Սարդի մարմինը ծածկված է երկար մազերով: Նրա բույներ մահացու է կենդանիների համար: Գործում է շատ ամուր ոտայն, որն իր մեջ կարող է պահպանել մինչև 300 կգ կշիռ ունեցող կենդանի: Երբ որսը խնկվում է ոտայնի մեջ, ձգվում է սարդի քաթեից մեկին ամրացված «ազդանշանային րելը», և սարդը հարձակվում է գոնի վրա:



Ս. ՄԿՐՏՅԱՆ